ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/0479/02/24

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ, ԳՈՐԾԸ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2024 թվականի հունվարի 26-ին Երևան քաղաքում

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Դունամալյանը, քննարկելով «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲ ընկերության ընդդեմ Ծաղկաձորի համայնքապետարանի, երրորդ անձ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության՝ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 27.12.2023թ. «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ գնումների մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 1061 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օրը նշանակելու հարցերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

հայցվորի ներկայացուցիչը 2024 թվականի հունվարի 23-ին հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ նաև՝ Դատարան) ընդդեմ Ծաղկաձորի համայնքապետարանի, երրորդ անձ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության՝ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 27.12.2023թ. «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ գնումների մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 1061 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Ներկայացված հայցադիմումը 23.01.2024 թվականին մակագրվել է դատավոր Ա. Դունամալյանին և դրան կից փաստաթղթերով 25.01.2024 թվականին հանձնվել դատավորի աշխատակազմին:

(I). Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը կարծում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

(II). Հաշվի առնելով, որ վերոնշյալ հայցադիմումն ենթակա է վարույթ ընդունման, Դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Ծաղկաձորի համայնքապետարանից պահանջել «ԾՔ-ԷԱՃԾՁԲ-24/1» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

(III). ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն դատարանը նույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ գործը դատական նիստում քննելու հարցը կարող է լուծվել նաև հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշմամբ:

Տվյալ դեպքում, ելնելով հայցի հիմքում դրված փաստերի առանձնահատկություններից՝ Դատարանը կարծում է, որ գործի քննությունը պետք է իրականացնել դատական նիստում:

(IV). Դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 234.5-րդ, 234.9-րդ և 200-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑ

1. «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲ ընկերության հայցն ընդդեմ Ծաղկաձորի համայնքապետարանի, երրորդ անձ՝ ՀՀ Ֆինանսների նախարարության՝ Ծաղկաձորի համայնքապետարանի՝ ՀՀ Կոտայքի մարզի Ծաղկաձոր համայնքի ղեկավարի 27.12.2023թ. «ՍԱԱՄ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ գնումների մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին թիվ 1061 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:

2. Ծաղկաձորի համայնքապետարանից պահանջել «ԾՔ-ԷԱՃԾՁԲ-24/1» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները,

3. եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024 թվականի մարտի 07-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

4. որոշման ապացույցներ պահանջելու մասին պահանջը պատասխանողի կողմից ենթակա է կատարման որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում,

5. նշանակել դատական նիստ 2024 թվականի փետրվարի 14-ին, ժամը՝ 16:00-ին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի «Արաբկիր» նստավայրում (հասցե՝ ք. Երևան, Հրաչյա Ներսիսյան 10, նիստերի դահլիճ թիվ 1):

6. որոշումն օրենքով սահմանված կարգով ուղարկել գործին մասնակցող անձանց,

7. որոշումն ուղարկելու հետ միաժամանակ պատասխանողին տեղեկացնել հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի և ժամկետի մասին:

8. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆ**